ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1573 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2075-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՍՈԼԱՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «ՍՈԼԱՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 2075-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 2-րդ կետում «2-րդ կետի» բառերը փոխարինել «2-րդ և 4-9-րդ կետերի» բառերով.

2) 2-րդ կետը «2211 256» թվերից հետո լրացնել «և 2211 257» թվերով.

3) 2-րդ կետում «պայմանագրով» բառը փոխարինել «պայմանագրերով» բառով.

4) որոշման հավելվածը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-9-րդ կետերով.

«

4.	8504330009	Հոսանքի կառավարման համակարգ	Այն իրենից ներկայացնում է հոսանքի կառավարման համակարգ, որի հիմնական դերն է հոսանքի ավտոմատ կայունացումը, լարման կայունացումը, փուլային անբավարարության պաշտ-պանությունը, ինչպես նաև լիարժեք գերտաքացումից պաշտպանվածության գործառույթները:	կգ/ հատ	21000/ 1	Չինաստան	Չինաստան	54 630 827	Լիզինգ պայմանագիր N 2211 257
5.	8462610019	Հիդրավլիկ պրես 4 կողմանի – 4 հատ	Այն իրենից ներկայացնում է հիդրավլիկ պրես թվային կառավարմամբ:	կգ/ հատ	5000/4	Չինաստան	Չինաստան	14 674 080	Լիզինգ պայմանագիր N 2211 257
6.	8207301000	Գործիքներ մետաղների մշակման, դրոշմման համար համա-պատասխան ֆորմայով	Այն իրենից ներկայացնում է գործիքների փոխովի աշխա-տանքային մասեր, որը կիրառվում է պրեսի մեջ, ունի հստակ չափս, տեսք և անցքեր:	կգ	3000	Չինաստան	Չինաստան	4 633 920	Լիզինգ պայմանագիր N 2211 257
7.	8461509009	Կտրող սարքավորում	Այն օգտագործվում է ալյու-մինե դետալների կտրման, սղոցման նպատակով: Գլխավոր առանձնահատ-կությունը կտրման	կգ/ հատ	3000/1	Չինաստան	Չինաստան	7 530 120	Լիզինգ պայմանագիր N 2211 257

			գործընթացի բարձր արագությունն ու հստակությունն է:						
8.	8462900018	Պրեսի միջոցով պրոֆիլներն իրար միացնող սարք	Այն իրենից ներկայացնում է սարքավորում, որը պրես անելու միջոցով երկու պրոֆիլները միացնում է իրար, ունի թվային կառավարում: Այս սարքավորումն առանձնանում է իր բարձր արտադրողականությամբ և ավտոմատացված լինելու հատկությամբ: Շահագործման ընթացքում մարդկային ռեսուրսի օգտագործումը հասցված է նվազագույնի: Ունի թվային կառավարում:	կգ/ հատ	3000/1	Չինաստան	Չինաստան	6 178 560	Լիզինգ պայմանագիր N 2211 257
9.	8461900000	Ծակող, կտրող-սղոցող սարք՝ 5 հատ	Այն իրենից ներկայացնում է ծրագրային ավտոմատ կառավարմամբ սարքավորում, որը հնարավորություն է տալիս մեկ կրակոցով դետալների վրա ստանալ անցքերն անհրաժեշտ ձևավորմամբ: Երկրորդային մշակման, դակելու, խոր անցքեր անելու անհրաժեշտություն այլևս չի լինում:	կգ/ հատ	5000/1	Չինաստան	Չինաստան	30 892 800	Լիզինգ պայմանագիր N 2211 257

			Արտադրական հզորությունը որպեռում 20-30 հատ է, ունի բարձր արդյունավետություն և արագություն: Հզորությունը՝ 7,5 կՎտ: Սղոցի չափսը՝ 305մմ*120						

».

5) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «309 289 200» թիվը փոխարինել «427 829 507» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ